Խոսքը վերաբերում է վարպետ Մինասի և վարպետ Հակոբջանի վարքերին, որոնք ընդգրկված են «Թէ ո՞րք և որպէ՞ս եղեն պատճառք գտանելոյ զոճս և զգիտութիւնս արտաքին գրոց և զարուեստս քերականութեան և նորոգեալ սփռեցին ի վարդապետս Հայոց, որ բնաւին բարձեալ և անհետ էր լեալ» վերնագրով ԻԹ գլխում: Ընդունված կարգից այդ «շեղումը» Դավրիժեցին պատճառաբանում է հետևյալ կերպ. «Այլ և պարտ վարկանիմ մեզ ականատես եղելոցս ոչ զանց առնել և այլովք ևս շնորհալից արամբք. ***թէպէտ և են աշխարհականք, այլ զի են հաւատով քրիստոնեայք և յազգէս Հայոց, որք են պարծանք և օգուտ մերում ազգի***» (էջ 321):

Դավրիժեցու աշխարհայացքի կարևորագույն կողմերը՝ կրոնասիրությունն ու հայրենասիրությունը, այս դրվագում երևում են առավել ընդգծված: